ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ԿԵՏԻ «Ա» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունել «ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը՝ հետևյալ հիմնավորումներով.

Նշված դիմումով գործը քննության նախապատրաստելու շրջանակներում պարզվել է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի մայիսի 25-ի ՍԴՈ-890 որոշմամբ արդեն իսկ լուծել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի (2007թ. նոյեմբերի 28-ի խմբագրությամբ) սահմանադրականության հարցը, այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն հիմք է գործի քննությունը մերժելու, հետևաբար՝ նաև նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով գործի վարույթը կարճելու համար։

Միաժամանակ, առկա չէ ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 14-րդ մասում նախատեսված կարգով վերանայելու որևէ հիմք։

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով« Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

«ՀՀ վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴԱՈ-52